№ 212 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 1902 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 № 212

ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գնվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Գեղարուեստը մեզանում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երեւանի քաղաքային ընտրութիւնները. Օպերային ներկայացումները. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հրէաները եւ Ռումինիան. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արեւելագէտների XIII միջազգային կոնգրէսը Համբուրգում.

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Չը նայելով այն հանգամանքին, որ Կովկասը պատմական օրերից շփում է ունեցել Յունաստանի ու Հռոմի և ապա Եւրոպայի հետ, այնուամենայնիւ նրան չէ աջողվել զարգացնել իր մէջ գեղարուեստը այն աստիճան, որ նա կարողանայ աչքի ընկնող տեղ բռնել այդ ասպարէզում:

Մեր երկրում մնացել են հին աւերակների բեկորների մէջ փոքր ի շատէ հոյակապ շինութիւնների հետքեր, ժողովրդական երգի և երաժշտութեան մէջ պահպանվել են մի քանի գրաւիչ եղանակներ, հին ձեռագիրների և տաճարների պատերի վրա անեղծ մնացել են մի քանի նկարչական գործեր: Այդ կայ. և եթէ պատմական հանգամանքները նպաստաւոր լինէին, գուցէ գեղարուեստի զարգացման սաղմերը հող գտնէին իրանց աւելի ընդարձակ բարգաւաճման համար: Բայց անցեալը հեռու է և դժուար մեկնելի և մենք մեր օրերում տեսնում ենք միայն մի տխուր պատկեր, որ գեղարուեստը ներկայումս գտնվում է մեր երկրում ամենաստոր աստիճանի վրա:

Մի երեսուն տարի սրանից առաջ Թիֆլիսում յարուցվեցին գեղարուեստի զարգացման խնդիրներ և կազմվեց նոյն իսկ մի յատուկ ընկերութիւն գեղարուեստի բարգաւաճման վերաբերեալ: Բայց հասարակութեան մէջ չը գտնվեցին համակրող, հովանաւորող և պաշտպանող տարրեր, որոնք կեանք տային գեղարուեստի ճիւղերին: Ժամանակ էր հարկաւոր ընտելացնելու հասարակութիւնը գեղարուեստի պահանջներին: Եւ պէտք է նկատել, որ ընտելանալու այդ գործողութիւնը առաջ է գնում շատ դանդաղ կերպով: Մինչև այժմ մենք ունենք միայն մի երաժշտական և մի նկարչական դպրոց, որոնցից վերջինը միայն երկու տարվայ գոյութիւն ունի: Կովկասի ուրիշ քաղաքներում ոչ մի հաստատութիւն չը կայ գեղարուեստին վերաբերեալ: Աւելացրէք դրան և այն, որ մեր երկրի ոչ մի կէտում գոյութիւն չունեն գեղարուեստական թանգարաններ, նկարչական գալլերէյներ, որոնք տարածանէին ժողովրդական մասսաների մէջ գեղարուեստի արդիւնքները և ստեղծագործութիւնները:

Կարելի է չափազանց համարել անգլիական մտածող Ռէօսկինի կարծիքը գեղարուեստի շատ լայն և փրկարար նշանակութեան մասին, բայց այն, ինչ որ մեր երկրումն ենք տեսնում, դա գեղարուեստի այնպիսի մեծ բացակայութիւն է, որ ներելի կը լինէր, եթէ մեր մէջ նկատվէր մի փոքր ի շատէ եռանդուն գործունէութիւն այդ ասպարէզում:

Թիֆլիսում այս տարի սկսում է կենդանութեան նշոյլներ ցոյց տալ «Գեղարուեստի զարգացման ընկերութիւնը»: Բայց արդեօք կը գտնվե՞ն եռանդուն գործողներ, որոնք իսկապէս գործ կատարէին: Ցանկանում ենք աջողութիւն:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Նամակ Երեւանից)

I

Այսօր, սեպտեմբերի 22-ին, տեղի ունեցաւ քաղաքային ձայնաւորների ընտրութիւնը, բայց մի ընտրութիւն, որ իր տգեղ ընթացքով անշուշտ լինելու է մի դաս, մի խրատ:

Ընտրութիւններին մասնակցում էին 780 ընտրողներից ընդամենը 343 հոգի, որոնցից 213 հայեր եւ 130 թուրքեր: Դրված էին քուէարկղների մօտ 120 տուփեր, պիտի ընտրվէին 72 հոգի, որոնցից իսկական ձայնաւորներ 60 եւ կանդիդատներ 12:

Չը նայած այն հանգամանքին, որ ընտրութիւնները պիտի սկսվէին եւ վերջանային մի ժողովում եւ կրկնաքուէարկութիւնը կարող է լինել բացառիկ եւ յայտնի հանգամանքներում, այնուամենայնիւ, շնորհիւ մեր ընտրող հասարակութեան անտակտ եւ մինչեւ անգամ տգեղ ընթացքի, 120 քուէարկվողներից հազիւ 26 հոգին ստացան կէսից աւելի ձայներ, հետեւապէս եւ համարվեցին ընտրելի: 94 հոգի, առանց բացառութեան, սեւացան, որոնցից շատերը ոչ միայն արժանաւոր ձայնաւորներ կարող էին համարվել, այլ եւ որոշ անհատների ներկայութիւնը ապագայ կազմի մէջ մի անհրաժեշտութիւն էր:

Մենք «Մշակի» 190 համարում ասացինք ընտրութիւնների նկատմամբ, որ «կան աղաներ, կան եւ երիտասարդներ, կայ եւ ազգութեան խնդիր, սակայն աւելի անախորժ բնաւորութիւն ունի ազգայնական խնդիրը»: Փորձը ցոյց տուեց, որ մեր ենթադրութիւնը միանգամայն ճիշդ էր. ճիշդ էր նաեւ մեր այն կարծիքը, որ բուն խնդիրը որոշ մարդիկ դարձնելով կրքի, անձնական հաշիւների ասպարէզ, կը ճաշակեն մի դառն պտուղ, որ նկատելի էր նոյն իսկ այսօր: Ինչու, ինչ կերպ...

Ընտրութիւններին մասնակցող 213 հայեր բաժանված էին երեք կուսակցութեան,—ինչ էք կարծում՝ սկզբունքի, գաղափարական պարտիաների: Բաւ լիցի, այլ անձնականը, շօշափած ինքնասիրութիւնը, ակնկալած շահերի կորուստը: Առիթը եկել էր եւ փոքրիկ մարդիկ իրանց կրքերով հրապարակ եկան: Կային մարդիկ, որոնք այդ րօպէին էլ միամիտ կերպով կրկնում էին՝ «ապա մենք լիտրը 28 կոպէկով հաց ուտենք»: Հասկանալի է, թէ այսպէս դատող մարդիկ ո՞ր աստիճան ընդունակ էին ձեռքը խղճին դրած մօտենալ ընտրողական տուփերին: Սրան աւելացրէք եւ այն, որ մեր դրացի թուրքերը սկզբունք ընտրած «թասիբը», անպայման սեւ էին գցում ամեն մի հայի անխտիր, լինէր արժանաւոր նա, թէ անարժան, այն ժամանակ հասկանալի կը լինի այն արդիւնքը, որ տուեց այսօրվայ ընտրութիւնը:

Ապացոյց մեր ասածների, առաջ ենք բերում ընտրվածների ցանկը: Ընտրված 26 հոգուց 10-ը թուրքեր են.—Միր-Աբաս Միր-Բաբաեվ, Մաքինսկի Փանահ-խան, Քեալբալայ-Մամադ-Ալի Հաջի-Աբդուլ-Ալի-օղլի, Հաջի-Իրզա Հաջի-Կասում-օղլի, Ղազիեվ Հիւսէյին-բէկ, Աղախան Մաքինսկի, Իբրահիմ-բէկ Մաքինսկի, Հաջիբէկլինսկի Աբաս-Ղուլի-բէկ, Հաջի-Ջաֆար-բէկ Հասանբէկ-օղլի, Իբրահիմ-բէկ Կազիեվ: Իսկ մնացած 16-ը՝ հայեր են.—Աֆրիկեան Առ., Աֆրիկեան Սար., Աբրահամեան Ե., Գեղամեան Վ. (նախկին քաղաքագլուխ), Ամիրեան Գրիգոր, Ուզբաշեան Կ., Աֆրիկեան Եր., Բունիաթեան Ար., Աղամեան Վ., Քալանթարով Թ., Տէր-Յակոբեան Տ., Գաբրիէլեան Արտ., Աղամիրզեան Աւ., Մնացականեան Գ., Ղորղանեան Ալ., Միրզոեան Հ.:

Ի նկատի ունենալով այս ցուցակը եւ թուրք ընտրողների 130 թիւը, կասկած չը կայ, որ ընտրված 10 թուրքերը ստացել են սպիտակ քուէներ մեծ քանակութեամբ նաեւ հայերից (մի քանի թուրքեր ստացել են 260, 250, 227

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՐԵՒԼԱԳԷՏՆԵՐԻ XIII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍԸ ՀԱՄԲՈՒՐԳՈՒՄ

III

Սեպտեմբերի 6-ին, շաբաթ երեկոյեան, Համբուրգի քաղաքային թատրօնում ի պատիւ արեւելագէտների կօնգրէսի կայացաւ գերմանացի աշխարհահռչակ երաժշտագէտ Ռ. Վագների «Die Walküre» անունով յայտնի օպերայի ներկայացումը, որին ներկայ էին կօնգրէսին մասնակցող գրեթէ բոլոր արեւելագէտները: Թատրօնի ամբողջ տարածութեան գրեթէ $^{2}/_{3}$ մասը բռնել էին արեւելագէտները, որոնց համար մուտքը ձրի էր:

Բացի դրանից, մի եւ նոյն օրը Համբուրգի հրէական տաճարում այնտեղի արեւելագէտ ռաբբին ժամասացութիւնից յետոյ ի պատիւ արեւելագէտների մի քարոզ խօսեց, որին ներկայ էին, բացի ծխական հրէաներից, եւ բազմաթիւ արեւելագէտներ: Հրէական ռաբբիի քարոզի վերնագիրը հետեւեալն էր. «Ո՞րն է արեւելքի տուած ամենամեծ ընծան արեւմուտքին»: Նա իր հակիրճ, բայց գիտնական ճառով պատասխանեց, որ Արեւելքի Արեւմուտքին տուած այդ ամենամեծ ընծան Աստուածաշունչը կամ միաստուածութեան գաղափարն է, կրօնական ամենազարգացած մի սիստեմ, որ բազմաբովանդակ սէր, մարգարէական հաւատ եւ համաշխարհային խաղաղութիւն է իր մէջ պարունակում: Դոկտ. ռաբբին իր ճառի վերջում աւելացրեց, որ ընդհանրապէս արեւելագիտութեան եւ մասնաւորապէս Աստուածաշունչ գրականութեան ուսումնասիրութեան վերջնական նպատակն է մեր պատմական յաւիտենական գոյութեան հանելուկի լուծումն, որ մի եւ նոյն ժամանակ մի մեծ մխիթարութիւն է մեր, Աստուածաշունչի մէջ պարունակած իդէալներին ոչ այնքան էլ համապատասխան ժամանակի համար:

Կիրակի օրը, սեպտեմբերի 7-ին, նոյնպէս նուիրված էր զուարճասիրական զբօսանքների դէպի Համբուրգի այն շրջակաները, որոնք Համբուրգի գրեթէ բոլոր այցելողներին միշտ հիացումն են պատճառել: Արեւելագէտները, երկու խմբերի բաժանված, պալօնական ձրի շոգենաւերով Էլբայի վրայով զբօսանքներ կատարեցին դէպի կայսր Վիլհէլմի ջրանցքը, Կուքսհաֆէն եւ գերմանական ծովը: Եղանակը հրաշալի էր: Համբուրգի նաւահանգստի բոլոր շոգենաւերը եւ Էլբա գետի ափերում գտնվող բոլոր տները ի պատիւ արեւելագէտների զարդարված էին դրօշակներով եւ ծաղիկներով: Ճանապարհին ամենուրեք տեղի էին ունենում հրավառութիւն, զանազան ցոյցեր եւ ժողովրդի համակրական նշանները դէպի գիտութեան ներկայացուցիչները:

Երկուշաբթի, սեպտեմբերի 8-ին, արեւելագէտները շարունակեցին իրանց գիտական զբաղմունքները: Առաւօտեան կայացաւ բոլոր սեկցիաների միացեալ ժողովը, որի զբաղմունքը հետեւեալն էր: Պրոֆէսոր կոմս Անջելօ-դէ-Գուբերնատիս (Հռոմից) կարդում է «Սակունտալա եւ Գրեզիլդա» վերնագրով հետաքրքիր դասախօսութիւնը, որի մէջ դասախօսը համեմատելով Սակունտալայի մասին գոյութիւն ունեցող արեւելեան լեգենդան Գրեզիլդային վերաբերող արեւմտեան լեգենդայի հետ, գալիս է այն եզրակացութեան, որ վերոյիշեալ թէ ասիական եւ թէ եւրոպական լեգենդաները մի եւ նոյն ծագումն ունեն եւ հետեւում են մի եւ նոյն նպատակին, այն է փառաւորելու կնոջ այն համբերատարութիւնը, որ նա տածում է դէպի իր ամուսինը, չը նայելով, որ վերջինս իր կնոջ հետ վատ է վարվում: Երկրորդ դասախօսութիւնը կարդում է Հայդըլբերգի համալսարանի պրոֆէսոր Մերքս «Հին կտակարանի ազդեցութիւնը տիեզերական պատմութեան զարգացման վրա» վերնագրով, որի հետաքրքրական բովանդակութիւնը համառօտ կերպով հետեւեալն է:

Ի՞նչ պէտք է հասկանալ տիեզերական պատմութեան տակ—եւ ինչպէս է նա ծագել: Տիեզերական պատմութիւնը ծագել է արեւմուտքի կամ հելլենականութեան արեւելքի կամ եբրայականութեան հետ ձուլվելու շնորհիւ: Սկզբում գոյութիւն չունէր տիեզերական պատմութիւն: Իւրաքանչիւր ազգի պատմութիւնը սկզբում զուտ ազգային է, որին իբրեւ լաւ օրինակ ծառայում է յունական պատմութիւնն ընդհանրապէս եւ պատմագրութեան հայր Հերոդոտը մասնաւորապէս: Հերոդոտը տոգորված է ամենաազնիւ ազգային գիտակցութեամբ: Նա իր պատմութեան մէջ օտար ազգերին յիշում է միայն այն ժամանակ, երբ դրանք սկսում են յարաբերութեան մէջ մտնել յոյների հետ: Տիեզերական պատմութեան գաղափարի առաջին եւ խոշոր ներկայացուցիչը յոյն պատմագիր Պօլիբիոսն էր, որ ապրում էր Հռոմում այն ժամանակ, երբ յունականութիւնը արդէն իր անկմանն էր դիմել: Առաջին անգամ նա հասկացաւ, որ պատմութիւնը ոչ թէ պատահական եւ միմեանց հետ ոչ մի կապ չունեցող անցքերի, մահացու հարուածների եւ յափշտակութիւնների յաջորդական շարք է, այլ որ ազգերի պատմութեան հիմքը կազմում են էական զանազան շարժառիթներ. դրա համար նա փորձում է պատմական դէպքերի կապը ըմբռնել եւ այդ դէպքերի պատահական պատճառները ներքին էական պատճառներից տարբերել: Նրա կարծիքով իւրաքանչիւր ազգի մասնաւոր պատմութիւնը ի նկատի չէ առնում իրերի ներքին կապը, այլ վերջինս ի նկատի է առնում միայն տիեզերական պատմութիւնը: Այդպիսով Պօլիբիոսի մէջ է առաջին անգամ հասունանում մի նախագիծ այն ժամանակվայ ծանօթ աշխարհի պատմութիւնը գրելու, չը նայելով, որ այդ աշխարհը նրա համար դեռ փոքր էր: Նա բոլորովին գաղափար չունէր Ալպերի միւս կողմում գտնուող ժողովուրդների մասին, դրա համար էլ նա Նեղոս եւ Դօն գետերի մէջ ընկնող ամբողջ տարածութիւնը Ասիա էր կոչում: Բայց, այնուամենայնիւ, Պօլիբիոսն իր նախագծով—պլանով տիեզերական պատմութեան հիմքը դրեց:

Նրանից մի դար յետոյ Կեսարի ժամանակ տիեզերական պատմութեան գաղափարը ի դէմս Դիոդոր պատմիչի արդէն պարզ էր: Վերջինիս կարծիքով բոլոր մարդիկ միմեանց հետ եղբայրներ են, որովհետեւ ամենքն էլ մի եւ նոյն ձեւով Աստուծուն իրանց հայր են ճանաչում: Դիոդորը ընդունում էր, որ ինչպէս երկնային աստղերը մի միութիւն են կազմում, այնպէս էլ երկիրս մի միութիւն կամ պօլիս է, որի քաղաքացիները ներկայացնում են զանազան ազգերը: Ուրեմն, ինչպէս տեսնում ենք, գաղափարն արդէն պատրաստ էր, բայց դեռ բացակայում էր այն բանը, ինչ որ տիեզերական պատմութիւնը ձեւականօրէն հնարաւոր էր դարձնում: Դիոդորը փորձեց յունական-հռոմէական մի ժամանակագրութիւն գրելու, բայց եւ մի եւ նոյն ժամանակ նա ի նկատի չունեցաւ եգիպտական, բաբելոնական եւ ասորական պատմական դէպքերը: Արեւմտեան ազգերի պատմութիւնը արեւելեան ազգերի պատմութեան հետ ձուլելու կամ հիւսելու պահանջը բոլորովին զգալի դարձաւ այն ժամանակ, երբ քրիստոնեաները յարաբերութեան մէջ մտան հեթանոսների հետ կամ երբ կուլտուրական տարբեր միջնոլորտները խառնվեցին միմեանց հետ: Քրիստոնէութեան եւ հին կտակարանի ազդեցութեան շնորհիւ միայն պահանջ է զգացվում պատմութիւնը իբրեւ մի միութիւն ձուլելու: Հէնց այդ ժամանակն էլ եբրայեցիների մէջ մի զգալի հոսանք սկսվեց յօգուտ տիեզերական պատմութեան: Այդ ազգն էլ իր կողմից նպաստեց տիեզերական պատմութեան հիմունքները հաստատելու: Քրիստոնէական ջատագովները (Apologeten) էլ մի եւ նոյն հիման վրա կանգնեցրին տիեզերական պատմութիւնը: Ուրեմն քրիստոնէութիւնը ընդհանուր պատձայներ), մի հանգամանք, որ պատիւ է բերում նրանց, որոնք առաջնորդվել են անհատական արժանաւորութիւններով, այն ինչ Թուրք ընտրողները առաջնորդվեցին ցեղական շահերով, չը ձգելով սպիտակ քուէներ, աննշան բացառութեամբ, ոչ մի հայի։ Ի նկատի ունենալով նրանց ստացած ձայների քանակը եւ ընտրող հայերի 213 թիւը՝ բացառութեան կարօտ չէ մեր ասածը Թուրքերի նկատմամբ։

Սակայն այս դրութեան հետ հաշտվելով հանդերձ, ի նկատի ունենալով մեր դրացի Թուրք ժողովրդի կրթութեան չափը եւ հայեցակէտը ընդհանուր խնդիրների վերաբերմամբ, մենք չենք կարող նորից կանգ չառնել մեր ընտրողների վրա, որոնք այնքան մեծահոգի գտնվելով դէպի Թուրքերը, շատ փոքրոգի, նոյն իսկ կրքոտ վերաբերվեցին դէպի միմեանց, դէպի շատ արժանաւորները։ Եւ շնորհիւ այդ բանի, ընտրված 16 հայերը պատկանում են մասամբ վաճառական եւ մասամբ ծառայող դասին, որոնք իրանց մեղմ բնաւորութեամբ եւ չը խօսկանութեամբ շահեցին համեմատաբար աւելի ձայներ։ Խօսքս մի երկու բացառութիւնների մասին չէ, այն ինչ շատ ու քիչ ինտելիգենտ, քաղաքային խորհրդի նիստերին կարծիք յայտնող եւ խնդիրներ շօշափող մարդիկ սեւացան։

Մի կուսակցութիւն նպատակ էր դրել տապալել ներկայ քաղաքագլխին. այդ մի փոքր դժուար էր նրանց միայնակ իրագործել, եւ որովհետեւ Թուրք ընտրողները անպայման հակառակ էին առհասարակ ամեն մի հայի, այդ պատճառով առաջ եկաւ մի մեծ կուսակցութիւն, որի կէս մասը, անշուշտ հակառակ լինելով հանդերձ նախկին քաղաքագլուխ Վ. Դեղամեանին, պաշտպանում էր նրա թեկնածութիւնը, միայն թէ հասնել կարողանար իր նպատակին՝ ներկայ քաղաքագլխի վերաբերմամբ. բայց երբ ներկայ քաղաքագլխի այդ հակառակ կուսակցութիւնը նոյնպէս մեծ մասամբ սեւացաւ, այդ ժամանակ նա զգաց, որ իր հաշիւների մէջ շատ սխալվել էր, հաւատալով Թուրքերի խոստմանը։

Այսպէս թէ այնպէս, անտակտ եւ անհեռատես փաստը կատարվեց, ընդհանուր շահերի պարտութիւնը կատարեալ եղաւ։

72 ընտրեալներից այժմ 46-ի տեղը բաց է։ Այդ բացը կարելի է ծածկել կրկնաքուէարկութեամբ, սակայն այստեղ էլ կայ մի այլ արգելք։ Հրապարակի վրա եղած շատ թէ քիչ արժանաւոր ընտրելիներ այսօր արդէն սեւ քուէներ շահեցին, որոնք, համաձայն քաղաքային կանոնադրութեան, իրաւունք չունեն կրկնաքուէարկութեան ենթարկվելու։ Ուրեմն ինչպէս անել։

Ինչպէս յայտնի է, գոյութիւն ունի սենատի մի բացատրութիւնը, որով մի անգամ չընտրված ձայնաւորը կարող է կրկնաքուէարկութեան ենթարկվել։ Մեր անտակտ ընտրողները, խելքի գալով, այժմ այդ հարցի վրա են կանգ առել, բայց թէ կարելի՞ կը լինի սենատի այդ բացատրութիւնից օգտվել, կամ կրկնաքուէարկութեան միջոցով սխալը ուղղել, թէ ձայնաւորների $^2/_3$ մասի պակասը կը ծածկվի նահանգապետի կարգադրութեամբ, այդ յայտնի չէ։ Սակայն փաստը այն է, որ մեր ընտրողներից շատ շատերը դեռ եւս ընդունակ չեն օգտվել իրանց շնորհված ինքնավարական իրաւունքներից։

Ա—Դօ

## ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Երեքշաբթի, ամսի 24-ին, օպերային խումբը տուեց «Աիդա» օպերան, որը հռչակաւոր կոմպոզիտոր Ջիուզեպպէ Վերդիի օպերաների գլուխ գործոցը, պարծանքն է համարվում։ 1869 թուականի վերջերում Վերդին, Եգիպտոսի Կայիրէ քաղաքի օպերայի դիրեկցիայի առաջարկութեամբ, գրում է եգիպտական կեանքից այդ անմահ օպերան, որ առաջին անգամ եւրոպացի յայտնի արտիստների մասնակցութեամբ մեծ աջողութեամբ դրվում է Կայիրէ քաղաքում։

«Աիդա»-ից առաջ գրած միւս 25 օպերաները աչքի են ընկնում իրանց յատուկ երաժշտական պարզութեամբ եւ առհասարակ եղանակների ու օրկեստրի պարզութեամբ եւ միակերպութեամբ։ «Աիդա»-ով Վերդին իր մէջ առաջ բերեց յեղափոխութիւն, հետեւեց փոքր ինչ Վագների եւ Մէերբերի ուղղութիւններին։ Այստեղ մենք տեսնում ենք եղանակների մեծ զանազանակերպութիւն, գեղեցիկ հարմոնիայի յաջորդականութիւն եւ հետաքրքիր ու բնորոշ ակոմպանիմենտ։

Այդ երեկոյ պէտք է ասել, որ ընդհանրապէս «Աիդա»-ի ներկայացումը բաւարար տպաւորութիւն թողեց։ «Աիդա»-ի կրակոտ եւ գեղեցիկ դերը անհամեմատ յարմարվում է օր. Զօրինայի ձայնին, քան նրա ընտրած միւս դերերը։ Ամներիսի հետ ունեցած սիրոյ վէճի տեսարանում կրակոտ էր եւ յատուկ արեւելեան տէմպերամենտի։ Ռադամէսի դերում առաջին անգամ լսեցինք Վասիլեւին։ Ահա մի ձայն օժտված բոլոր լաւ յատկութիւններով, բայց ափսոս, որ ղեկավարը դեռ շատ անփորձ եւ զուրկ է մի որ եւ է կանոնաւոր շկօլայի ուղղութիւնից։ Նրա խաղը եւ շարժուածքները միայն ծիծաղ եւ զայրոյթ են առաջ բերում հանդիսականների մէջ։ Պարոնը, եթէ չենք սխալվում, այս երկրորդ անգամն է, որ դուրս է գալիս հասարակութեան առաջ. յուսով ենք, որ այդ պակասութիւնները ժամանակին կանյայտանան եւ մենք կունենանք մի լաւ տէնօր, որ այժմ հազուագիւտ են մեր օպերաների բեմի համար։ Ամներիսի դերը կատարեց Կարամզինա-Ժուկովսկայեան իր փորձված խաղով եւ լայնածաւալ ու ազդեցիկ ձայնով լաւ տարաւ դերը։ Գ. Պոլուեանովը Եթովպացոց թագաւորի Ամոնասրօի դերում մեզ չը բաւականացրեց. նա չը կարողացաւ տալ մեզ Ամոնասրօյի վայրենի եւ կրակոտ տիպը. Նրա ձայնը այդ դերի համար շատ կակուղ է հնչվում։

Թագաւորի դերում Պետրովը եւ քրմի դերում Իզմայլովը չը փչացրին ընդհանուր անսամբլը։ Օրկէստրը այդ երեկոյ իր գագաթնակէտին էր։ Ժողովրդի բուռն ծափահարութեամբ պ. Շտեյմբերգին մի քանի անգամ դուրս կանչեցին բեմը։ Թատրոնը լիքը չէր։

Ա. Մամաջան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, սեպտեմբերի 22-ին

Խնդրում եմ չը մերժել հրատարակել ներկայս։ Չը գիտեմ ով, երբ եւ ինչպէս կամ ինչու համար տարածել է իմ մասին իբր թէ ես կաթոլիկ դաւանութեան եմ պատկանում։ Եթէ որ սա մանր մարդու մը կամ մարդկանց փոլիթիքա է, յանցաւոր եւ թաքուն հաշիւ է զիս պախեցնելու համար իմ հարազատ կրօնէն, ինչ որ, եթէ ողորմելի չէր եղած՝ ծիծաղելի պիտի լինէր, յամենայն դէպս չարագործութիւն մը այն պատճառով, որ այդ տըխուր համբաւաբերը գիտէ, թէ մենք դեռ այնպիսի մի հասարակութիւն ենք, յորում մարդու մը արժանիքները կարող են միանգամայն չքանալ այն րօպէից՝ երբ այլ եւս, գիտցէք, լուսաւորչական չէ այդ մարդը՝... Ճիշտ ինչպէս մեր հայ գիւղական համայնքներու մէջ, ուր պասը ուտողներուն էլ «բարեւ, Աստուծոյ բարին» չի՛ կայ։ Երկու տարիէն աւելի է, երբ առաջին անգամ դիմեցին ինձ այսպիսի հարցով։ Ես ուշադրութիւն էյ չի դարձրի։ Ապա քանի մը անգամ Թիֆլիսով անցնելիս, բոլոր նոր թէ հին ծանօթներս մի եւ նոյն հարցը տուին ինձ. այսինքն, լուսաւորչական եմ, թէ կաթօլիկ։ Վերջին անգամ բանը այնտեղ է հասել, որ ոմանք գրաւ են բռնել եւ ինձ դիմում են ցաւալի եւ միանգամայն ծիծաղելի հարցով։ Ահա ինչու, մեծապատիւ տէր խմբագիր, համարձակվում եմ խնդրել, որ բարեհաճէք հրատարակել ներկայս ի գիտութիւն հասարակութեան՝ որ ես «ի հօրէ եւ ի մօրէ, յեօթն պորտէ անտի» Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցում ծնված եւ լուսաւորչական մկրտուած եմ եւ, էհ, փառք Աստուծոյ—ինչպէս էլ անյայտ ընտանիքի զաւակ չեմ եւ իմ կեանքում բնաւ առիթ չեմ ունեցել դաւանափոխ լինելու։

Նկարիչ՝ Արշակ Ֆէթվաճեանց

## ՆՈՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեւանից մեզ հեռագրում են, որ քաղաքային լրացուցիչ ընտրութիւնները նշանակված են հոկտեմբեր ամսի 6-ին։

—

Թիֆլիսի քաղաքային ուպրավան իր վերջին նիստում քննեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարչի գրութիւնը, որ ստացվել է որպէս պատասխան Թիֆլիսի քաղաքային դումայի միջնորդութեան՝ Հաւլաբարում պրոգիմնազիա բանալու վերաբերմամբ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարչի պատասխանի մէջ առաջարկվում է, պրոգիմնազիայի փոխարէն, բանալ Հաւլաբարում չորսդասարանեան մեխանիկոտեխնիքական ուսումնարան հանքային գործարանական բաժանմունքով։ Քննելով այդ առաջարկութիւնը՝ Թիֆլիսի քաղաքային ուպրավան որոշեց յանձնել նրան քաղաքային ուսումնարանական մասնաժողովին։

—

Հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին, «Թիֆլիսի ժողովարանի» ամարային բնակարանում, առաւօտեան 10 ժամից սկսած, Թիֆլիսի քաղաքային ուպրավայի կարգադրութեամբ, կը տրվեն մուտքի տոմսակներ երրորդ ընտրողական շրջանի ընտրութիւնների համար եւս։

—

Երեքշաբթի, սեպտեմբերի 24-ին, տեղի ունեցաւ Զուբալովի կտակած գումարով կառուցվելիք ժողովրդական տան հիմնարկութիւնը։ Հանդէսին ներկայ էին շինութեան կոմիտէտի անդամները, ժողովրդական ընթերցանութիւնների մասնաժողովի անդամներից մի քանիսը եւ հանգուցեալ Զուբալովի ժառանգներից մէկը։

—

Թիֆլիսի ոստիկանապետը ոստիկանական պաշտօնեաների ուշադրութիւնը հրաւիրեց այն հանգամանքի վրա, որ օտարաքաղաքացի շատ հրէաներ ապօրինի կերպով երկար ժամանակ ապրում են Թիֆլիսում եւ առաջարկեց լուրջ

---

մութեան զարգացման համար յարմար ժամանակ երեւան եկաւ։

Այդ հոսանքի ու շարժման ամենախոշոր ներկայացուցիչը Եւսեբիոսն է իր ժամանակագրութեամբ, որ համարվում է մայր ապագայ ամբողջ տիեզերական պատմութեան։ Նա հաստատեց արեւմտեան ազգերի պատմութեան հիմքը եւ իր աշխատութեամբ դարձաւ յաջորդ բոլոր պատմագիրների համար իբրեւ ամենագլխաւոր աղբիւր։ Այն բոլոր ազգերի մէջ, որոնք պատմութեան միութեան վերոյիշեալ իդէան լաւ չէին հասկացել, նրանց մէջ էլ չը ծագեց տիեզերական պատմութիւնը, որի համար իբրեւ լաւ օրինակ կարող են ծառայել արաբացիները։

Արաբացիները ունեն միայն մասնաւոր ու ազգային պատմութիւն։ Նրանք ընդունում ու ճանաչում են միայն հպատակութիւն եւ տիրապետութիւն։ Տիրապետութիւն արաբական ազգի եւ հպատակութիւն բոլոր միւս ազգերի։ Արաբացիներն ոչ երբէք էլ չեն ունենայ տիեզերական պատմութիւն, որովհետեւ վերջինիս գլխաւոր հիմքը կազմում է եղբայրութեան գաղափարը։ Վերջապէս տիեզերական պատմութեան իդէան հին քրիստոնէական փիլիսոփայութեան արդիւնքն է, այն փիլիսոփայութեան, որ պատմութեան ամբողջ բովանդակութիւնը մի սիստեմի է վերածել։

Երրորդ ընդհանուր հետաքրքրութիւն ունեցող դասախօսութիւնը կարդաց եգիպտական կառավարութեան ներկայացուցիչ Ահմէդ-Զէքի-բէյ Գահիրէից «Վառօդի եւ թնդանօթի գիւտի» մասին։ Դասախօսի գլխաւոր նպատակն էր ապացուցանել, որ վառօդի եւ թնդանօթի գիւտը գերմանական հանճարի ծնունդն է, ինչպէս որ վկայում են մեր ձեռքը հասած եւ մինչեւ օրս անծանօթ եղած արաբական մի քանի աղբիւրներ։ Այդ դասախօսութեան հետաքրքիր եւ համառօտ բովանդակութիւնը բերում ենք այստեղ։

Վիեննայի, Պօլսի եւ Ալժիրի գրադարաններում գտնվում են արաբական մի աշխատութեան ձեռագիրներ, որոնց բոլորի ծագումն էլ ըստ երեւոյթին Թունիսիցն է։ Վերոյիշեալ աշխատութիւնը սկզբում ոչ թէ արաբական, այլ սպանիական լեզուով է շարադրած եղել, միայն արաբական նշանագրերով։ Բնագրի հեղինակն է Ահմէդ Իբն Մուհամմեդ անունով մի մահմեդական՝ Գրանադայից, որ շատ հաւատարիմ մնաց իր հաւատին եւ հայրենիքին, չը նայելով որ այդ ժամանակ սաստիկ հալածանքներ էին սկսվել Մաւրիտանացիների դէմ Սպանիայում։ Նա, դժբաղդաբար, մոռացել էր իր մայրենի լեզուն։ Իբն Մուհամմեդը շատ էր ցանկանում թնդանօթների պատրաստութեան եւ հրաձիգ զէնքերի գործածութեան հետ ծանօթանալ, իր ձեռք բերած տեղեկութիւնները հաւատակից արաբացիների մէջ տարածել եւ այդպիսով նպաստել նրանց այդ գիւտերի օգնութեամբ իսլամական պետութիւնը Սպանիայում վերահաստատելու։ Նա մտաւ նոյն իսկ զինուորական ծառայութեան մէջ զէնքի գործածութեան հետ վարժվելու եւ շատ սիրով էր կարդում ու ուսումնասիրում զինուորական եւ տեխնիկական բովանդակութիւն ունեցող այն բոլոր գրուածքները, որոնք նրա ձեռքն էին ընկնում։

Երբ Ահմէդը իրան բաւարար կերպով նախապատրաստված զգաց, գնաց Թունիս, սկսեց պրօպագանդա իր պլանի համար եւ պատրաստեց նոյն իսկ մի փոքրիկ նաւատորմ Սպանիայի դէմ կռուելու համար։ Այդ արշաւանքի ժամանակ նա վիրաւորվեց եւ հիւանդ ժամանակ սպաներէն շարադրեց իր վերոյիշեալ աշխատութիւնը, որ եւ յետոյ թարգմանվեց արաբերէն՝ Մարոկկոյի սուլթանի թարգմանիչ Հիջրիի ձեռքով։ Թարգմանութիւնը կատարվեց հեղինակի մասնակցութեամբ եւ դրա մէջ շատ բաներ մնացին սպաներէն արտայայտութեամբ, որովհետեւ արաբերէն լեզուն չունէր սպաներէն բառերի համար տեխնիքական համապատասխան արտայայտութիւններ։ Իբն Մուհամմեդի ասելով, վառօդի գիւտը պատկանում է մի գերմանացի կրօնաւորի, որ նա արել է 265 տարի առաջ։ Նրա գրուածքի թարգմանութիւնը եղել է 1635 թ.։ Գրուածքի թարգմանութեան մէջ նկարագրված են եւ թնդանօթների ու հրաձիգ զէնքերի մասին մանրամասնութիւններ, եւ բացի դրանից գովաբանված են առանձնապէս գերմանացիները, որոնք դեռ այժմ էլ պատերազմական զէնքերի ու գործիքների ամենահմուտ վարպետներ են համարվում։ Գրվածքը պարունակում է գերմանացիների դրութեան մասին եւ մի քանի պատահական տեղեկութիւններ, որոնք իսկապէս ոչ մի կապ չունեն գրուածքի բովանդակութեան հետ։

Չորրորդ դասախօսութեամբ մանրամասն զեկուցումն է տալիս դոկտոր Բորխարդ—Գահիրէից գերմանական արեւելագիտական ընկերութեան Եգիպտոսում արած վերջին պեղումների մասին, որից յետոյ վերջանում է խառն ժողովը եւ սկսվում են սեկցիաների մասնաւոր նիստերը։

Իրանական սեկցիայում հայագէտ պրոֆէսոր Լեման համառօտ զեկուցմամբ բացատրելով հայկական կենդանի գաւառաբարբառների գիտական նշանակութիւնը արեւելագիտութեան համար, խորհուրդ է տալիս եւ առաջարկում է սեկցիային նիւթական բաւարար միջոց յատկացնել մասնագէտ արեւելագէտներին, որպէսզի վերջիններս կարողանան այդ գաւառաբարբառները ուսումնասիրել եւ բուն երկրում դրանց համար բնորոշ նմուշներ հաւաքել, քանի որ ուշ չէ եւ թիւրքական կառավարութեան անդամների բռնութիւնը դեռ եւս բոլորովին արմատախիլ չէ արել հայկական տարրը Թիւրքաց Հայաստանում։ Մի եւ նոյն սեկցիայում յայտնի հայագէտ Հիւբշմանը համառօտ զեկուցումն է տալիս պ. Հ. Առաքելեանի ուղարկած «Քրդերը Պարսկաստանում» եւ ֆրանսիացի գիտնական Մորգանի «Հայկական այբուբէնի ծագումն» վերնագրով դասախօսութիւնների մասին, որոնք իրանց հեղինակների բացակայութեան պատճառով ամբողջապէս չեն կարդացվում։ Սեկցիան վճռում է վերոյիշեալ երկու աշխատութիւնները հրատարակել իր ապագայ ժողովածուի մէջ։ Պ. Հ. Առաքելեանի միւս դասախօսութիւնը, այն է «Հայերի յարաբերութիւններն Արեւմուտքի հետ միջին դարերում եւ յետոյ»։ «Փոխադարձ յարաբերութիւններն արեւելքի եւ արեւմուտքի մէջ» սեկցիայի որոշմամբ յանձնվում է Կլերմոնի պրօֆէսոր Լ. Բրեհիէին մանրամասն զեկուցանելու, որ եւ կատարում է վերոյիշեալ սեկցիայում։ Պ. Հ. Առաքելեանի աշխատութիւնը «Պարսկաստանի քրդերի» մասին միակն էր կոնգրէսում իր բովանդակութեան տեսակէտից, որովհետեւ միւս արեւելագէտներից ոչ ոք քրդերի մասին չը խօսեց։ Եւ զարմանալի էլ չէ։ Քրդերի բազմակողմանի ուսումնասիրութիւնը միայն վերջին տարիներս է արեւելագիտութեան ուշադրութիւնը իր վրա դարձրել։ Նրանց զանազան տեսակէտներից ուսումնասիրելը կարող է լոյս սփռել արեւելագիտութեան շատ մութ հարցերի վրա։ Հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ նորերս Բեռլինի գիտութիւնների ճեմարանի եւ Գերմանիայի Վիլհէլմ կայսրի նախաձեռնութեամբ եւ նիւթական նպաստով մի յայտնի գիտնական ուղարկվեց Քրդստան՝ քրդերի ուսումնասիրութեամբ զբաղվելու։ Այդ ուսումնասիրութիւնը ժամանակակից գործնական նշանակութիւն էլ ունի Գերմանիայի համար, որովհետեւ Բաղդադի ապագայ երկաթուղին պէտք է անցնէ այնպիսի տեղերով, որոնց ազգաբնակութեան մի զգալի տոկոսը կազմում են քրդերը։

Հայագէտ դոկտոր Կարստ՝ Ստրասբուրգից դասախօսեց հայոց լեզուի յոգնակիի կազմութեան մասին եւ համեմատեց այդ կովկասեան միւս լեզուների հետ։ Աւելորդ չենք համարում եւ յիշել այստեղ, որ վերոյիշեալ երիտասարդ գիտնականը, ինչպէս որ նա մեզ հաղորդեց, գերմաներէն է թարգմանել Մխիթար Գօշի դատաստանագիրքը, որ շուտով պէտք է լոյս տեսնէ։ Միւս սեկցիաներում կարդացվեցին մի շարք զուտ մասնագիտական դասախօսութիւններ, որոնց վերնագիրներն անգամ աւելորդ ենք համարում յիշել։

Լ. Բաբայեան

միջոցներ ձեռք առնել, որպէս զի այդ տեսակ դէպքերն այսուհետեւ չը կրկնուեն եւ ամեն մի նորեկ հրէայի մասին, որ իրաւունք չունի ապրել հրէաների բնակութեան համար սահմանված տեղերից դուրս, առանձին զեկուցվի իրան՝ կարեւոր կարգադրութիւն անելու համար։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշեց մսավաճառութեան երրորդ խանութը բանալ Վերայի հրապարակում, յարմարեցնելով դրա համար այստեղ եղած քաղաքային շինութիւնը, իսկ չորրորդը Հավլաբարում, Կախէտինսկայա փողոցի վրա, վարձովի տան մէջ։

—

«Рус. Вѣд.» լրագիրը հաղորդում է, թէ գինու արքունի մենավաճառը Անդրկովկասում կը մտցվի 1905 թուականից։

—

ԿԵՐՉԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 15-ին Կերչի հայոց ծխական ուսումնարանում տեղի ունեցաւ երէցփոխի ընտրութիւն։ Միաձայն ընտրվեց Կերչի առաջին կարգի վաճառական պ. Մ. Կուշնարեանը»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Ինչպէս յայտնի է, քաղաքիս ս. Փրկիչ եկեղեցու նորընտիր երէցփոխ պ. Խ. Զիլինկարեանի ընտրութեան դէմ մի քանի բողոքներ էին գնացել Թիֆլիսի կոնսիստորիա։ Բացի դրանից, ինչպէս լսեցինք, բողոքողներից երկու անձինք, Թիֆլիս գնալով, անձամբ ներկայացել են վիճակային առաջնորդին եւ մի առ մի յայտնել իրանց բողոքների շարժառիթները։ Բայց կոնսիստորիան բոլորովին անհետեւանք թողեց այդ բողոքները եւ հաստատել է այդ ընտրութիւնը եւ, ինչպէս լսեցինք, արդէն հրամանագրել է մեր հոգեւոր կառավարութեան, որ երէցփոխի պաշտօնը յանձնվի նորընտիր երէցփոխին։ Այդ ընտրութիւնը աջողեցնելու համար, ինչպէս յայտնի է, Թիֆլիս էր գնացել մեր փոխանորդ Բաբգէն վարդապետը, որ վերադարձաւ Ախալցխա։ Կոնսիստորիայի այդ հարցին այնպէս անփոյթ վերաբերվելը եւ շուտափոյթ, առանց մանրամասն քննելու, ընտրութիւն հաստատելը մեզ շատ զարմացրեց։ Ինչպէս լսում ենք, բողոքող պատգամաւորները, տեսնելով կոնսիստորիայի այս վարմունքը, դիմել են մի խնդրագրով Էջմիածնի սինոդին»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀՐԷԱՆԵՐԸ ԵՒ ՌՈՒՄԻՆԻԱՆ

Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահ Ռուզվէլտ վերջերս երկու այնպիսի նշանաւոր քայլեր արեց, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը իր վրա հրաւիրեց եւ համաշխարհային մամուլը եռանդուն կերպով զբաղվելով Նախագահի յարուցած հարցերով՝ պատրաստում է հասարակական կարծիքը ի նպաստ այդ հարցերի աջող լուծման։

Այդ խնդիրներից առաջինը շօշափում է տնտեսական եւ առեւտրական շահերը։ Նախագահը, իբրեւ չարիք նկատելով առեւտրական եւ արդիւնաբերական գործերի համար կազմվող ընկերութիւնների այն ձեւը, որ կոչվում է սինդիկատ, առաջարկում է կռիւ մղել այդ չարիքի դէմ եւ թուլացնել նրանց զարգացումը։ Թողնելով առանձին խօսել այդ հարցի մասին, մանաւանդ որ նա կարեւոր է եւ մեր երկրի համար, ուր վերջերս նոյնպէս սկսել են սինդիկատներ հիմնվել, մենք այսօր կանգ կառնենք Նախագահ Ռուզվէլտի յարուցած երկրորդ հարցի վրա։

Մի դիպլոմատիական շրջաբերականով, որ ուղղված է Բերլինի դաշնագիրը ստորագրող վեց մեծ պետութիւններին, Նախագահը յայտնում է, որ թէեւ Ամերիկան չէ մասնակցել այդ դաշնագրի կնքման, բայց յանուն մարդասիրութեան եւ մանաւանդ այն պատճառով, որ Ռումինիայի հրէայ ազգաբնակութիւնը շարունակ գաղթում է Միացեալ-Նահանգները, զուրկ ապրուստի որ եւ է միջոցներից, նա խնդրում է պետութիւններին միջոցներ ձեռք առնել, որ հրէայ ազգաբնակութիւնը Ռումինիայում չենթարկվի այն սաստիկ հալածանքներին, որոնց նա ենթակայ է շարունակ, հակառակ Բերլինի դաշնագրի մի որոշ յօդուածին, որ պարտաւորութիւն է դնում Ռումինիայի վրա չը հալածել հրէաներին եւ բարւոքել նրանց դրութիւնը։

Ռումինիան դեռ անկախութիւն ձեռք բերելուց առաջ, երբ դեռ գտնվում էր թիւրքական տիրապետութեան ներքոյ, շարունակ հալածում էր իր երկրում ապրող հրէաներին։ Հրէաների գանգատները այնքան սաստկացան, որ Բերլինի կոնգրէսը ստիպվեց ուշադրութիւն դարձնել նրանց թշուառ դրութեան վրա եւ յատուկ յօդուածով պարտաւորեցրեց Ռումինիային դադարեցնել հակամարդկային եւ հակաքրիստոնէական հալածանքը։

Սակայն ինչպէս Թիւրքիան ամբողջ 25 տարուայ ընթացքում չը կատարեց Բերլինի դաշնագրի ոչ մի յօդուածը, ոչ մի րէֆօրմներ չը մտցրեց ոչ Մակեդոնիայում, ոչ Հայաստանում, նոյնպէս եւ Ռումինիան բոլորովին զանցառութեան տուեց Բերլինի դաշնագրի որոշումը եւ, ընդհակառակն, աւելի սաստկացրեց հալածանքը։ Բոլոր ականատեսները եւ ճանապարհորդները վկայում են, որ հրէաների վիճակը Ռումինիայում անտանելի է. նրանք զրկված են շատ իրաւունքներից, նրանց թոյլ չէ տրվում անշարժ կալուածքներ, տներ ունենալ։ Ռումինական կառավարութիւնը աշխատում է հասցնել հրէաներին այնպիսի դրութեան, որ նրանց մնում է կամ գաղթել կամ սոված մեռնել։ Եւ նրանք շարունակ գաղթում են զանազան երկիրներ, գլխաւորապէս Ամերիկա։ Գաղթականութեան հոսանքը այնքան մեծ ծաւալ է ստացել, որ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը ստիպված է տեսնում իրան հրաւիրել մեծ պետութիւնների ուշադրութիւնը, որ ժամանակ է զսպել փոքրիկ Ռումինիային կատարել այն պարտաւորութիւնները, որ դրվել են նրա վրա միջազգային դաշնագրով։

Սա առաջին անգամն է, որ մի մեծ եւ զօրաւոր պետութիւն դիմում է միւս մեծ պետութիւններին եւ յարուցանում մի հալածված, թշուառ ժողովրդի պաշտպանութեան հարցը, եւ յիշեցնում է նրանց իրանց ստանձնած պարտաւորութիւնը։ Անկասկած, Նախագահ Ռուզվէլտի այդ մարդասիրական եւ համարձակ քայլը մեծ աղմուկ եւ համակրութիւն առաջ բերեց։ Եւրոպական մամուլը մեծ ոգեւորութեամբ ողջունեց նրա այդ քայլը եւ զանազան տեղերում նոյն իսկ միտինգներ կազմվեցին եւ ուղերձներ գրվեցին՝ շնորհակալութիւն յայտնելով Նախագահին։ Անգլիայում պարլամենտի եւ եկեղեցու ներկայացուցիչներ, ինչպէս օ Կենտերբէրիի արքեպիսկոպոսը, Լօնդօնի եւ Վէքֆիլդի եպիսկոպոսները, լորդ Հերբերտ Գլադստօն, Կէլվին, Րիպօն, «Times» լրագրի մէջ գրված յօդուածներով, յայտնում են իրանց խորին համակրութիւնը այն մեծ ազգի թշուառ ներկայացուցիչներին, որ անարդար կերպով հալածվում են «քրիստոնեայ» կոչված մի երկրի կառավարութեան կողմից»։

Անգլիական մինիստր Ջեմբերլէն հետեւեալ կարծիքն է յայտնել. «Ես վճռողականապէս դէմ եմ որ եւ է տեսակ հալածանքի մարդկանց որ եւ է խմբի դէմ կրօնի պատճառով եւ ցաւում եմ հրէաների դէմ տարածված անհեթեթութիւնների մասին։ Պատմութիւնը վկայում է, որ հրէաները, մնալով հաւատարիմ իրանց ազգութեան եւ կրօնին, մի եւ նոյն ժամանակ ամեն տեղ հանդիսացել են իբրեւ ամենաօրինական (լօյալ) տարր։ Այդ ազգը հալածող կառավարութիւնների քաղաքական կարճատեսութիւնը նոյնքան դատապարտելի է, որքան այն անգթութիւնը, որով աշխատում են նրանից ազատվել»։

Մեծ պետութիւնները դեռ չեն պատասխանել Նախագահ Ռուզվէլտի յայտագրին, սակայն, ինչպէս հաղորդում է «Times» լրագրի Վիէննայի թղթակիցը, ռումինական կառավարութիւնը մտադիր է բոլորովին անհետեւանք թողնել քաղաքակիրթ երկիրների բոլոր առաջարկները հրէաների դրութեան մասին եւ ոչ միայն չը պէտք է փոխէ հակասեմիտական օրէնքները, այլ պէտք է սաստկացնէ հալածանքները մինչեւ այն աստիճան, որ ստիպէ ամբողջ հրէայ ժողովրդին թողնել Ռումինիան եւ նոր հայրենիք որոնել։ «Times» լրագիրը, խորապէս վրդովված այդ յանդուգն յամառութեամբ, խորհուրդ է տալիս ճնշում գործ դնել Ռումինիայի վրա։

Յիշում է Ռումինիան, որ ինքն էլ մի ժամանակ ճնշված եւ հարստահարված երկիր էր։

Հ. Ա.

### ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ռաշտ, սեպտեմբերի 17-ին

Երեքշաբթի օր, սեպտեմբերի 17-ի առաւօտեան, Ռաշտի դատաւորի կողմից մունետիկը շրջում էր քաղաքի փողոցները եւ բարձրաձայն ազդարարում ժողովրդին, որ այդ գիշեր հրավառութիւն պիտի լինի, որովհետեւ պարսից արեգակնափայլ արքայից-արքայ Մօզաֆէր-դէն Շահը այդ օրը, իր հնգամսեայ ճանապարհորդութիւնից յետոյ, ողջ եւ առողջ ոտք է կոխել պարսից հողը՝ Աստարա։

Թէ պարսիկները եւ թէ հայերը ուրախ էին, որ նորին վեհափառութիւնն անվտանգ հասել է իր երկիրը. բոլոր վաճառականները, դատաւորի հրամանի համաձայն, իրանց խանութները զարդարել էին գոյնզգոյն գեղեցիկ ճրագներով։ Դատաւորի տան առջեւ երկու երաժշտական խումբ նուագում էր շարունակ ամբողջ ժամերով. ուրախութիւնը եւ հրճուանքը շատ մեծ էր։ Սակայն այդ ուրախութիւնը երկար չը տեւեց. գիշերվայ ժամը 11-ին մի խանութից սկսվեցին կրակի բոցեր բարձրանալ. մի ակնթարթում լուր տարածվեց, թէ քաղաքն այրվում է. ամենքը շփոթված դուրս եկան տներից եւ խմբվեցին շուկան. տեսարանը խիստ սրտաճմլիկ էր. համաճարակ հրդեհը մի րոպէի մէջ տարածվեց։ Պարսիկները շփոթված՝ խռնվել էին իրար, ամեն մէկը իր խանութի մասին էր մտածում, ընդհանուր ուժով հրդեհին դիմադրող չը կար, որի կարմիր եւ այրող բոցերը, կատաղի ձայներ արձակելով, բարձրանում էին դէպի երկինք։ Մի քանի ժամվայ ընթացքում կրակը յափշտակեց մօտաւորապէս 1500 խանութ եւ 8 քարվանսարայ։ Վնասը շատ մեծ գումարի է հասնում, որովհետեւ խանութներում շատ մթերքներ կային, որոնցից մեծագոյն մասը հրդեհի ճիրաններից ազատել չը կարողացան։

Պարսիկ ագահ ամբոխը, փոխանակ հրդեհը հանգցնելու, վաճառականների կրակից ազատած ապրանքը յափշտակում էր. նոյն իսկ կանայք, որ գիշերով տնից դուրս չեն գալիս, այդ գիշեր խմբերով՝ ման էին գալիս շուկայում եւ ինչ որ աջողվում էր՝ գողանում եւ ծածկում էին իրանց չարչաֆի տակ։

Հայերը վնասից ազատ են, որովհետեւ իրանց խանութներից եւ ոչ մէկը չէ այրվել, շնորհիւ իրանց անդուլ աշխատանքի եւ քաջութեան. եթէ հայերը կրակի առաջը չառնէին, հաւանական էր ամբողջ քաղաքն այրվէր։

Հրդեհի պատճառն այսպէս են բացատրում. Այդ գիշեր երկու պարսիկ իրանց խանութի սենեակներից մէկում զուարճանալիս են լինում, յետոյ սկսում են կատակով միմեանց հետ սենեակի մէջ կռիւ բռնել. յանկարծ դիպչում են լամպային, որը կոտրվում, նաւթը թափվում է ու սկսում է բռնկվել միանգամից եւ այրել վարագոյրը. մինչեւ վարագոյրի հանգցնելը, առաստաղն էլ է կրակվում, որից յետոյ արդէն հրդեհը տարածվում է։

Այս առաջին անգամը չէ, որ քաղաքը այդ վտանգին է ենթարկվում, ուրեմն լաւ կը լինէր, որ հայերը հարուստ պարսիկ վաճառականների հետ միասին լուրջ միջոցներ ձեռք առնէին, որպէս զի այդպիսի դէպք պատահելիս, կարողանան անմիջապէս վտանգի առաջն առնել։

Հրդեհի յաջորդ օրը ռուսաց հիւպատոսը հայերին նուիրել է մի գումար, որպէս զի քէֆ անեն իրանց կրած նեղութիւնների համար։

Ս. Մ. Պ.

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Pro Arménia» լրագրի վերջին թերթում տպված է մի նամակ թիւրքահայ գաղթականների մասին։ Լրագիրը յայտնում է, թէ անշուշտ ֆրանսիական կառավարութիւնը, որին Թիֆլիսի ֆրանսիական հիւպատոսը տեղեկացրել է գաղթականների վիճակի մասին, ճնշում գործ կը դնէ օսմանեան կառավարութեան վրա, որ թոյլ տրվի գաղթականներին վերադառնալ իրանց հայրենիքը։

—Ինչպէս յայտնի է, Լիբանանի համար նոր ընդհանուր նահանգապետ պէտք է նշանակվէր։ Այժմ եւրոպական լրագիրները հաղորդում են, որ այդ նահանգապետը նշանակված է արդէն. նրա անունն է Մուզաֆէր-փաշա, կոմս Չայկովսկու որդին, սուլթանի գեներալ-լէյտենանտը եւ կաթոլիկ։ Նա որդին է այն կոմս Չայկովսկու, որ լեհական առաջին ապստամբութեան ժամանակ 30-ական թուականներին փախաւ Թիւրքիա եւ ընդունեց իսլամութիւն, Սադիկ անունով, որպէս զի չը յանձնվի Ռուսաստանին։ Կրիմի պատերազմում նա կռւում էր Ռուսաստանի դէմ։ 1875-ին, Կայսր Ալեքսանդր II, սուլթան Աբդուլ-Ազիզի խնդիրքով, թոյլատրեց նրան վերադառնալ Ռուսաստան, որտեղ եւ նա մեռաւ։ Մուզաֆֆէր-փաշան, թէեւ կաթոլիկ, բայց խորին կերպով անձնուէր է սուլթանին։

—Սալոնիկից հեռագրում են «Temps» լրագրին, թէ Մօնաստիրի վիլայէթի բուլգարական գիւղերի ամբողջ ազգաբնակութիւնը ապստամբեց եւ յարձակվեց այն գիւղերի վրա, որոնց ազգաբնակութիւնը կազմված է թիւրք տարրից։ Տեղի ունեցան մի քանի ընդհարումներ։ Սալոնիկի եւ Մօնաստիրի զինուորական իշխանութիւնները, հեռագրով տեղեկութիւն ստանալով այդ մասին, անյապաղ զօրքեր ուղարկեցին, որոնք շրջապատեցին ապստամբներին։ Դրութիւնը շատ լուրջ է։ Ըստ երեւոյթին, Մակեդոնիայի բուլգարները վճռել են այլ եւս չը համաձայնվել ոչ մի առաջարկութեան եւ գործել զինված ու բացայայտ կերպով։

—«Agence Nationale» լրագրին հեռագրում են Բրիւսէլից, թէ բելգիական Լէօպոլդ թագաւորը առաջիկայ փետրվար ամսին կուղեւորվի Նիւ-Եօրկ եւ կայցելէ Միացեալ-Նահանգների մեծ քաղաքներից մի քանիսը։ Բացի սրանից թագաւորը մտադիր է ճանապարհորդութիւններ կատարել Չինաստանում եւ բրիտանական Հնդկաստանում։

—Ինչպէս հեռագրում են Լօնդօնից «Neue Freie Presse» լրագրին, Լօնդօնի ռումինական դեսպանը հաղորդեց բոլոր անգլիական լրագիրներին, թէ տեղեկութիւնները հրէաներին հալածելու մասին Ռումինիայում ճիշդ չեն։ Օտարերկրացիներին վերաբերեալ օրէնքը չէ ուղղված հրէաների դէմ։ Հրէաները գաղթում են Ռումինիայից բացառապէս գիւղատնտեսութեան ծանր պայմանների պատճառով։ Եթէ օտարերկրեայ կառավարութիւնները ստանային աւելի ճիշդ տեղեկութիւններ իրերի այժմեան դրութեան մասին Ռումինիայում, այն ժամանակ նրանք կը խոստովանէին, որ ամերիկական յայտագրի համար բաւականաչափ հիմք չը կար։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ։ Մինիստրների խորհրդում Դէլկասէ յայտնեց, թէ ինքն եւ սիամական մինիստրը այսօր ստորագրեցին մի պայմանագիր, որով կանոնաւորվում են երկու պետութիւնների մէջ եղած վիճելի հարցերը։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Ազգային գվարդիան Պէնսիլվանիայում կանչված է ծառայութեան գործադուլների շրջանում։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Մօտ երեք ժամին Կ. Պօլսից «Գէօրգի Պօբէդօնօսէց» զրահակրով ժամանեց Մեծ Իշխան Նիկօլայ Նիկօլաեվիչ եւ իսկոյն եւ եթ ձիերով ճանապարհ ընկաւ Լիվադիա։

ԲԵԼԳՐԱԴ։ Ոստիկանութիւնը փակեց մակեդոնական կոնգրէսի երէկվայ նիստը աղմկալի անկարգութիւնների պատճառով։

Կ. ՊՕԼԻՍ։ «Գէօրգի Պօբէդօնօսէցը» Դարդանէլի միջով անցնելու թոյլտուութեան մասին խօսակցութիւնների առիթով՝ Բ. Դրան պաշտօնական շրջաններում յայտարարում են, որ դաշնագրերը չեն խախտվում զինուորական այն նաւերի անցնելը թոյլ տալով, որոնց վրա գտնվում են թագաւորները կամ պրինցները, որպէս նրանց ներկայացուցիչներ։

ՊԱՐԻԶ։ Առեւտրի եւ արդիւնաբերութեան հանրապետական մասնաժողովի տարեկան բանկէտում Տրուլիօ, Բրիսսօն եւ Կօմբ ճառեր արտասանեցին։ Կօմբ շնորհակալութիւն յայտնեց այն հաւանութեան համար, որ հռետորները յայտնեցին կառավարութեանը։ Վալդէկ-Ռուսսօի քաղաքականութիւնը առանց փոփոխութիւնների մնաց։ Մինիստրական դեկլարացիայի մէջ բացատրված խնդիրը հաղիւ գծագրված է, սակայն կառավարութիւնը բաւական եռանդ կունենայ իրագործել այդ խնդիրը։ Կառավարութիւնը հոգատարութեամբ է վերաբերվում առեւտրի եւ արդիւնաբերութեան շահերին եւ ներկայումս երկրի ներսում թագաւորում է հանգստութիւն, իսկ երկրից դուրս—խաղաղութիւն։ Ֆրանսիան 1860 թւից յամառութեամբ հետեւում էր խաղաղ քաղաքականութեան. մնացած պետութիւններից ոչ մէկը Ֆրանսիայից աւելի չէր պաշտպանում խաղաղութիւնը, նրանից աւելի կողմնակից չէր միջազգային միջնորդ դատարանին։ Ազգայնականութիւնը աշխատում է գայթակղեցնել Ֆրանսիան պատերազմի եւ նուաճումների հեռանկարով, բայց Ֆրանսիան արհամարհանքով մերժեց պատերազմը եւ րէակցիան։ Ֆրանսիան խաղաղասիրութեամբ, բայց ոչ թուլութեամբ, ունի մի զօրք, որը իր քաջութեամբ եւ թւով հաւասար է իւրաքանչիւր ուրիշ պետութեան զօրքին։ Հանրապետական Ֆրանսիան յափշտակվում է քաղաքակրթական վարդապետութիւններով, որոնք յետ են մղում ժողովուրդներին պատերազմից։ Վայելեցէք այդ խաղաղութիւնը, որը աւելի հաստատ կարելի է համարել, քան երբ եւ իցէ, շնորհիւ դէպի բոլոր պետութիւնները ունեցած գեղեցիկ յարաբերութիւնների։ Աշխարհը խոստովանում է մեր արտաքին քաղաքականութեան օրինականութիւնը։ Շնորհիւ դրա, հանրապետութիւնը ունի զօրեղ դաշնակցութիւն, բարեկամական յարաբերութիւններ եւ շրջապատված է յարգանքով։ Նա չէ վախենում միապետականների եւ նացիօնալիստների սպառնալիքներից»։ (Ծափահարութիւններ)։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստրը թոյլատրեց բանալ լրացուցիչ կրէդիտ պետական բանկում, Կիեվի գրասենեակում, Մոսկվա-Կիեվ Վորօնէժեան երկաթուղուն 500,000 ր. ցորենի համար փոխատուութիւններ տալու։

Հոկտեմբերին հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան մէջ կը քննւի վերջնական ձեւով ռուսական եւ ֆինլանդական երկաթուղիների միջեւ ուղղակի յարաբերութիւններ հաստատելու հարցը։

25 սեպտեմբերի

**ՇԱՄԱԽԻ**։ Կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխան Գ. Ս. Գօլիցին, երկու օր մնալով Շամախի, մանրամասն տեսաւ նոր կառուցւած քաղաքամասերը եւ գծագրեց քաղաքը վերականգնելու համար լինելիք աշխատանքների ընթացքը։

**ՍԻՄՖԵՐՈՊՕԼ**։ «Սալգիրին» հաղորդում են, որ սեպտեմբերի 18-ին, երեկոյեան վեց եւ եօթ ժամերի միջեւ, Բէրդեանսկի գաւառի Լիխտէնաու, Լինդէնաու եւ ուրիշ կօլօնիաներում զգացվում էր գետնի ցնցումն, ստորերկրեայ երեք հարուածներով։

**ԿՕՐՍՈՒՆ** (Սիմբիրսկի նահանգ)։ Կօրսունի զէմստվօի ժողովը որոշեց զէմստվօի նոր տան դահլիճի մէջ դնել Կայսր Ալէքսանդր II-ի կիսարձանը։

**Կ. ՊՈԼԻՍ**։ Ապստամբական աւազակախմբերի կատարած անկարգութիւնների մասին տեղեկութիւնները ճիշդ չեն եւ չափազանցրած են։ Հետախուզութիւնների հիման վրա, գործերի դրութիւնը վատացաւ երեք վիլայէթներում։ Եւրօպական մամուլը քննում է այդ՝ խիստ յոռետես լեզուով։ Պատերազմական նոր միջոցներ ձեռք առնելու վերաբերեալ տեղեկութիւնը չէ հաստատվում։ Անկարգութիւնները անցան ծայրագոյն սահմանը եւ աշնան պատճառով աստիճանաբար դադարում են։

**ՆԻՒ-ԵՕՐԿ**։ Մանիլայից հաղորդում են, որ սեպտեմբերի 12-ին Գուամում տեղի ունեցան ստորերկրեայ հարուածներ։ Աւերված են ծովային զօրանոցները եւ ուրիշ շինութիւններ։

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳ**։ «Правительственный Вѣстникъ» լրագրում տպված է, թէ ուժեղացրած է ոստիկանութեան դէպարտամէնտի գործող շտատը։

Գեներալ-ադիւտանտ իշխան Ամիլախվարիին շնորհված է ս. Վլադիմիրի առաջին աստիճանի շքանշանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

**ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ**

Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս
**ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
Сергiевская ул., д. 12.

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Քաղաքագլխի Պաշտօնակատարը սրանով յայտնում է պ. պ. ընտրողներին, որ Թիֆլիսի Քաղաքային Դումայի ձայնաւորների ընտրութիւնները երկրորդ ընտրողական շրջանի համար նշանակված են 1902 թւի սեպտեմբերի 26-ին, «Թիֆլիսի Ժողովարանի» ամառնային շինութեան մէջ, Միխայլովսկայա փողոցի վրա։ Ընտրողական ժողովը մտնելու համար տոմսակների տալը կը կատարվի Վարչութեան դիւանատան մէջ մինչեւ սեպտեմբերի 25-ը, իսկ ընտրութիւնների օրը կը կատարվի «Թիֆլիսի Ժողովարանի» շինութեան մէջ առաւօտեան 10 ժամից մինչեւ քուէների հաշւելը։ 2—3

### ԲԺԻՇԿ ՄՈՒԼԻՆ

ընդունում է ամեն օր կոկորդի, քթի եւ ականջի հիւանդութիւններ ունեցողներին, ժամը 11—1 առաւօտեան եւ ժամը 4—6-ը երեկոյեան։ Սուդեբնայա փողոց, № 30։
5—14

### ՄԻ ՀԻՆ ԴՊՐՈՑԱՒԱՐՏ

երիտասարդ փնտրում է պաշտօն՝ գանձապահի, կառավարչի կամ վերակացութեան։ Ունի ընտիր րեկոմենդացիաներ։
Հասցէն՝ Հաւլաբար, Իօրսկայեա փող. № 1.
5—6

### ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին
**ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ**
Կը ներկայացնէ առաջին անգամ նոր պիէսա

### ՎԱՆԻՒՇԻՆԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Դրամա 4 գործ. հեղ. Նայդեօնովի, թարգմ. Ե. Աբէլեանի
**ԱՅՍ ՊԻԵՍԱՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԻ**

Մասնակցում են.—տ.տ. Ադնիւ, Գուլազեան, Զաբէլ, օր. Խիթարեան, տ.տ. Մայսուրեան, Մէլիքեան, օր. Զմշկեան, օր. Վարդուհի եւ օր. Օհանեան, պ.պ. Աբէլեան, Մամիկոնեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Պետրոսեան, Տէր-Դաւթեան եւ այլն։

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։

Միւս ներկայացումը հոկտեմբերի 4-ին է

Կասսան բաց է առաւօտեան ժամը 10-ից մինչեւ 2-ը, երեկոյեան 6-ից մինչեւ 8-ը։

1—1 Ռեժիսոր՝ Ե. Աբէլեանց

### ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Տէլէֆօն № 617

Այսօր, հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին, Խարկովի ռուսաց օպերային դերասանները, կը ներկայացնեն

### ՖԱՈՒՍՏ

օպերա 4 գործ. եւ 5 պատկ. երաժշտ. Գունօի

Մասնակցում են—տ. տ. Արցիբաշեվա, Դոբրժանսկայա, Բասուէր, պ.պ. Դնէպրովսկիյ, Գրադով, Սերգէեվ, Պետրով եւ այլն։

Բալետը կը կատարէ բալետմէյստեր պ. Մենաբէնի։ Զինուորական օրկէստր 1-ին կովկասեան սապերների բատալիօնի, պ. Րիչչարի կառավարութեամբ։ Կապելմէյստեր Մ.Մ. Բուկշա. խորմէյստէր Ա. Գ. Զվէրշանսկի։ Ադմինիստրատոր Մ. Դուրանդին։ Սկիզբը երեկոյեան ժամի 8-ին։

Կասսան բաց է ամեն օր, առաւօտեան ժամի 10-ից մինչեւ 3-ը եւ երեկոյեան 6-ից մինչեւ ներկայացման վերջը։

Ազդ։ Վաղը, ուրբաթ, սեպտեմբերի 27-ին, պ. Բօնաչիչի մասնակցութեամբ կը ներկայացնեն «ՊԻԿՕՎԱՅԱ ԴԱՄԱ»։

Դեղարուեստական մասի կառավարիչ Ի. Փիթօեվ։ 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ

### Ա. ԲԱԲԱՅԵԱՆ

կը սկսէ ընդունելութիւնը սեպտեմբերի 27-ից։ Սերգիեվսկայա փողոց, № 14։ Տելեֆօն 472։
1—4

### Ուսուցչուհի Լ. Պ. ՇԱՀԱՆԵԱՆ

որ աւարտել է կանանց մանկավարժական կուրսերը եւ ունի դիպլօմ, տալիս է դասեր ռուսաց լեզուից եւ մաթեմատիկայից, նախապատրաստում եւ կրկնում է դասերը երկու սեռի աշակերտների հետ, նոյնպէս եւ ընդունում է իր մօտ գիշերօթիկ երեխաներ։ Հասցէն. Սապեօրնայա փողոց, № 33 (Саперная ул., № 33).
4—4

Մամուլի տակից դուրս եկան եւ վաճառվում են Կենտրոնական գրավաճառանոցում

**ԽՈՐԷՆ ՔԱՀ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑ**

### ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ա. տարի, պատկերազարդ։ Ս. Պետերբ. 1902 թ.
Գինն է 30 կ.

Նոյն հեղինակի

### ՀԱՏԸՆՏԻՐ ԱՂՕԹՔՆԵՐ

Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, հանդերձ ռուսերէն թարգմանութեամբ։ Ս. Պետ. 1902։
Գինն է 30 կոպ.
Գումարով գնողներին 20% զեղչ է լինում։
(չ. ո. կ.) 3—12

## ՉԸ ՏԵՍՆՎԱԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԻՄԻԱՅՆ 10 ՕՐՈՎ
Սեպտեմբերի 20-ից մինչեւ Հոկտեմբերի 1-ը

## ԵՂԲ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

խանութում նշանակված է
Անցեալ տարիների սովորութեան համեմատ՝ այս տարի եւս
**ՉԸ ՏԵՍՆՎԱԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ**
Սեզօնից մնացած՝ տղամարդկանց բոլոր ձմեռվայ հագուստների, որոնք առանձնացրած եւ վերջնական գներն նշանակված են էտիկէտների վրա կապոյտ մատիտով
Ստացված են նոյնպէս
**ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ** տղամարդկանց, կանանց եւ երեխաների **ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ**, պատրաստված ամենավերջին տարազով
Ընդունում ենք նաեւ
Մեր սեփական կտորներից **ԱՄԵՆԱՑԵՆ ՏԵՍԱԿ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ**, թէ եւրօպական եւ թէ ֆորմէնիյ—աշակերտական, ստացված արտասահմանեան եւ ռուսական ամենայայտնի գործարաններից։
**ԳՆԵՐԻ ԷԺԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՉ ՈՔ ՉԷ ԿԱՐՈՂ ՄՐՑԵԼ**
6—10

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական—առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) առեւտրական տնտեսագիտութիւն։ 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. 23—25

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

### ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տա երկու սեռի անձանց եւ պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն. 2) Առեւտրական Թուաբանութիւն. 3) Հաշւապահութիւն (պարզ, կրկնակի եւ բանկային).4) Թուաբանութիւն համրիչի վրա. 5) Առեւտրական Թղթակցութիւն. 6) Առեւտրական եւ մուրհակի կանոնադրութիւն եւ 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ձրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 16-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 2-ից, ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչեւ 12-ը, եւ երեկոյեան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիեվսկայա եւ Լերմօնտօվսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. կ.) 24—25

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. վաճառականներին, որոնք կը կամենային գործ ունենալ ՎԱՐՇԱՎԱՅԻ հետ, որ ես վաղուց արդէն վերաբնակված լինելով Վարշավայում, յանձն եմ առնում եւ կատարում եմ ամենայն տեսակ

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ իմ բազմամեայ հմտութեամբ առեւտրական ասպարէզում օգտաւէտ կարող եմ լինել ինձ դիմող վաճառականներին, որոնց խնդրում եմ դիմել ինձ հետեւեալ հասցէով.
ВАРШАВА, Медовая 17, кв. 33. Минасу Яргулову. (կ. հ.) 20—50

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

## ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

## ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում

**ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է**

Երկու սեռի անձանց՝ գործնական ձեւով հաշւապահութիւն 4 ամսում, պատասխանատւութեամբ, եւ հարկաւոր դէպքում՝ յանձնարարականով

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշւապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշւապահութիւն։
2) առեւտրական թուաբանութիւն։
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։
5) Վայելչագրութիւն եւ ուղղումն ամենավատ ձեռագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1902 թւի Սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում է, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, վկայագիր։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիր ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ (կ. ե. հ. չ.) 32—35

Позволено Цензурою, Тифлисъ, 25 Сентября 1902 г.
Электропечатная Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.